

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### **2018թ. Վայոց ձորի մարզի կրթության ոլորտում կատարված աշխատանքների վերաբերյալ**

Վայոց ձորի մարզում գործում է 48 հանրակրթական դպրոց, այդ թվում 14 հիմնական, 31 միջնակարգ, 2 առանձնացված ավագ դպրոց և 1 կրթահամալիր: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում: 5 դպրոցներ գտնվում են բարձր լեռնային բնակավայրերում: Մարզում գործում է տարածաշրջանային պետական քոլեջ և տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը:

- Մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 17, սովորողների թիվը 385 - է:
- 50-100 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 9, սովորողների թիվը 663 – է:
- 100 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների թիվը-22, սովորողների թիվը 5258 է:

Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

Ուստիկանության կողմից հաշվառման վերցված երեխաներ չկան:

Մարզի 48 դպրոցներում 2017-2018 ուստարում սովորում է 6306 աշակերտ, որից 701-ը առանձնացված ավագ դպրոցներում և կրթահամալիրում:

Մարզային ենթակայությամբ գործող 45 հանրակրթական դպրոցների աշակերտների կրթության կազմակերպման համար նախատեսված է 1 795 810,5 հազ. դրամ:

Առաջին դասարան են ընդունվել 655 երեխա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 155 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2, Եղեգնաձորի թիվ 1, Ջերմուկի թիվ 1, Վայքի հիմնական, Ջերմուկի թիվ 3, Շատինի, Արենիի, Քարազլխի, Զառիթափի միջն. դպրոցներում և Ջերմուկի կրթահամալիրում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար:

Պետբյուջեից նրանց կրթության կազմակերպման համար նախատեսվել է 74832,3 հազ. դրամ:

Բացվել և գործում են 28 նախակրթարաններ, որոնցից 17-ը դպրոցներում:

Դպրոցներում գործող նախակրթարաններում ընդգրկվել է 161 երեխա:

Պետբյուջեից նրանց կրթության կազմակերպման համար նախատեսվել է 24807,9 հազ. դրամ:

Դպրոցներում աշխատում են 978 ուսուցիչներ, որոնցից 856-ը ունեն բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (մոտ 87%-ը), մնացած 122-ը՝ միջնակարգ մասնագիտական:

- Ուսուցիչ / աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1:6,4:
- Դասարանի միջին խտությունը 14,8 - է:
- Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17 ժամ:

Մարզում գործում է 17 մանկապարտեզ 44 խմբով, որոնցում ընդգրկված է 1044 նախադպրոցական տարիքի երեխա: Նրանց հետ աշխատում են 85 դաստիարակներ:

- Խմբի միջին խտությունը կազմում է 23:
- Դաստիարակ / երեխա հարաբերակցությունը կազմում է 1:12

Սահմանված կարգով գործում են հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդները, որոնց անվանական կազմը 2016թ. մարտի 4-ին հաստատվել է Վայոց ձորի մարզպետի N 26 որոշմամբ: Հաջողությամբ իրականացվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4-րդ դասարանների 2399 երեխաներ դպրոցում ստանում են սնունդ: Սահմանված կարգով կազմակերպվում են դպրոցներում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթները: Ուստարվա ընթացքում անցկացվել է ուսուցչի թափուր տեղի համար 26 մրցույթ: ԴՏ<ՏՇ<-ի կողմից մարզի 1-ին, 2-րդ և 3-րդ դասարանների 3607 աշակերտների հատկացվել են ուսումնական գրասալիկներ: Դրանց օգտագործման նպատակով վերապատրաստվել են 1-ին, 2-րդ և 3-րդ դասարաններում պարապող բոլոր դասվարները: Մարզի հանրակրթական դպրոցների մեծ մասը՝ մոտ 80%, վերանորոգված են: Բոլոր դպրոցներում լուծված է ջեռուցման խնդիրը: 17 դպրոցներ ջեռուցվում են գազի լուկա կաթսայատան միջոցով, մնացածը՝ էլեկտրական ջեռուցիչներով: Մարզի բոլոր դպրոցները ապահովված են համակարգիչներով, գործում է ինտերնետ կապը: Ներդրվել և աշխատում է Dasaran.am ծրագիրը, ըստ որի մուտքագրվում են պահանջվող ցուցանիշները: Ամբողջությամբ լուծված է աշակերտների դասագրքերով ապահովվածության խնդիրը, վարձավճարները հավաքագրվել են 100%-ով:

Դպրոցներում հաջողությամբ ներդրվել է շախմատ առարկան, բոլոր դպրոցները ապահովված են անհրաժեշտ գույքով և դասագրքերով: Մարզի բոլոր դպրոցներում ներդրվել է <<Ազգային երգ ու պար>> առարկան, որի համար վերապատրաստվել են 45 ուսուցիչներ:

Ամեն տարի փետրվար-մարտ ամիսներին անցկացվում են դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը 16 առարկաներից: Այս ուստարում նրանցից 52-ը մասնակցել են հանրապետական փուլին, որոնցից 12-ը արժանացել են դիպլոմների և գովասանագրերի:

Դպրոցներում սահմանված կարգով անցկացվել են 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննությունները: Մարզային ենթակայության 45 դպրոցներում 9-րդ դասարանն ավարտել են 459, իսկ 12-րդ դասարանը 164 շրջանավարտներ:

Անցկացվել է հերթական ատեստավորման համար 113 ուսուցիչների վերապատրաստման դասընթացները որոնք կազմակերպվել են Կրթության ազգային ինստիտուտի Վայոց ձորի մասնաճյուղում: Մարզի 8 դպրոցներում ինֆորմացիոն տեխնոլոգիաների միության կողմից ներդրվել են ոռբոտաշինության լաբորատորիաներ, որը մեծ խթան կարող է հանդիսանալ աշակերտների տեսական գիտելիքների ստեղծագործական կիրառման ուղղությամբ: 2018թ օգոստոսի 27- ին հրավիրվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների խորհրդակցություն,որին ներկա էր ՀՀ կրթության և գիտության նախարար պարոն Ա.Հարությունյանը:

**2018թ** օգոստոս ամսվա ընթացքում Վայոց ձորի մարզպետարանի կրթության,մշակույթի և սպորտի վարչությունում,իսկ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում Վայոց ձորի մարզի 15 դպրոցներում Կրթության պետական տեսչական մարմնի կողմից կատարվել է ստուգումներ:Ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունների և բացթողումների վերացման համար տրվել է համապատասխան հանձնարարականներ:

ՀՀ կառավարության որոշմամբ մարզի սոցիալապես անապահով, բազմազավակ, զոհված զինճառայողների, աշխարհագորայիների և սակավ ապահովված ընտանիքների 195 դպրոցահասակ երեխաներ հանգստացել են Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:

Մարզի դպրոցներում բարձր հիմքերի վրա է ուղղահայրենասիրական դաստիարակության դրվածքը:

Բոլոր դպրոցներն ապահովված են ուսումնական զենքով: Դպրոցների բարձր դասարանների աշակերտները պրակտիկ զինվորական պարապմունքներ են անցկացնում 4-րդ բանակային կորպուսի զորավարժարանում:

Կրակային պատրաստության համար սահմանված գրաֆիկով մարզում տեղակայված զորավարժարանում աշակերտների համար անցկացվել է հրաձգություն ավտոմատ զինատեսակից:

## ՄՇԱԿՈՒՅԹ

Համայնքներում կազմակերպվում են փոխայցելություններ համերգային ծրագրերով, մասնակցում են մարզկենտրոնում կազմակերպված բոլոր միջոցառումներին/ պարի փառատոն,ասմունքի փառատոն, մանկական թատերական փառատոն, անկախության տոնին ,առաջին հանրապետության 100 ամյակին նվիրված տոնին, 'Բերքի տոն', 'Գաթայի տոն', 'Գինու' տոն և այլն:

Միաժամանակ մասնակցում են նաև Մշակույթի նախարարության կողմից կազմակերպված „Մշակութային կանգառ“, ծրագրին, սահմանամերձ և սահմանապահ համայնքների երեխաների համար կազմակերպված պիլոտային մշակութային ծրագրին, ֆրանկոֆոնիայի և կիրառական արվեստի այլ ծրագրերի:

### Միջոցառման անվանումը

- 1 Հայրենասիրական երգերի և ազգագրական պարերի փառատոն
- 2 Երգչախմբային փառատոն
- 3 Ֆրանկոֆոնիայի օր Վայոց ձորում
- 4 Եվրոպական ժառանգության օրեր
- 5 Մայիսյան հաղթանակներին նվիրված մասսայական միջոցառումներ(Մայիսի – 1, Մայիսի – 8, Մայիսի – 9)
- 6 Մանկական թատերական փառատոն
- 7 Լուսանկարիչների ցուցահանդես <Մշակութային Վայոց ձոր> թեմայով
- 8 Երեխաների պաշպանության օրվան նվիրված միջոցառում
- 9 <Մշակութային կանգառ> ծրագրով Թ. Ալթունյանի անվան երգի –պարի անսամբլի համերգը
- 10 Նկարչական ցուցահանդես <Ցուցահանդեսային կենտրոն> ՊՈԱԿ-ի կողմից
- 11 Ֆիլմերի ցուցադրություն Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից

### *Մարզական ոլորտ*

Վայոց ձորի համայնքները մասնակցում են մարզում կազմակերպված բոլոր սպորտային միջոցառումներին/հուշամրցաշարեր, մարզի առաջնություններ, գավաթի խաղարկություններ/ և այլն: Ակտիվորեն մասնակցում են Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպված մրցույթներին` / „Լավագույն նախադպրոցական

հաստատություն,, „Լավագույն մարզական ընտանիք,,  
„Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ,, „Լավագույն  
գյուղական մարզիկ,, „Տարեցների հանրապետական խաղեր,,  
„Հանրապետական ռազմամարզական խաղեր,, „Մարզական  
փառատոն,, և այլն:

09.01.2019թ.